

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը (ընդունված է 2003 թվականի ապրիլի 18) լրացնել նոր՝ 207.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈՂՎԱԾ 207.1. ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑԱԾ ԱՊՐԱՆՔ ԻՐԱՑՆԵԼԸ

1. Առեւտրի կետերի կողմից առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, պիտանիության ժամկետի նշումը աղավաղված, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված եւ նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը, եթե դա առաջացրել է մարդու առողջության ծանր կամ որեւէ այլ վնաս,

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքների նախագծերի նպատակն է Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքով սահմանված մեխանիզմներով բացառել Հայաստանի Հանրապետություն ժամկետանց, ինչպես նաև պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը:

Օրենքի նախագիծը հնարավորություն կտա պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, ապահովել արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահությունը:

Նախագիծը կերաշխավորի սպառողների կողմից պատշաճ որակի եւ սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների ձեռքբերման, սպառողների շահերի պետական եւ հասարակական պաշտպանության իրավունքները:

Քանի որ սննդամթերքը վերջին հաշվով սպառողին է հասնում առևտրի կետերի միջոցով, ուստի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն վարչական տուգանքներ կիրառելու մեխանիզմներով պաշտպանել ինչպես սպառողների իրավունքները, այնպես էլ բացառել առևտրի կետերի կողմից պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքը արտադրողներից կամ ներմուծողներից ձեռք բերելն ու իրացնելը:

Եթե «ՀՀ Մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կբացառի ժամկետանց, ինչպես նաև պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը, ապա առաջարկվող «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը իր հերթին կապահովի, որպեսզի տեղական շուկայում բացառվեն, ինչպես տեղական արտադրողների կողմից, այնպես էլ ներմուծողների կողմից ժամկետներում ներկրված, սակայն պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքի իրացումը: Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունը կերաշխավորի սպառողի՝ սննդամթերքը եւ սննդային հավելումները անվտանգ օգտագործելու իրավունքը:

Հիշյալ նախագծերը քննարկվել են սպառողների իրավունքների պաշտպանության տարբեր հասարակական շահագրգիռ կառույցների հետ եւ արժանացել նրանց հավանությանը:

Հեղինակներ՝ [Արա Նռանյան](#), [Կարեն Վարդանյան](#), [Ստյոպա Սաֆարյան](#), [Վարդան Բոստանջյան](#), [Արմեն Մարտիրոսյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Արծվիկ Մինասյան](#)